



Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարության հետ

Վ. Գաբրիելյան
2012թ.

Հայաստանի Հանրապետության
Մալիաների կոմիտեի նախագահ
և Կառավարության
Սեփականության կոմիտեի նախագահ
Գ. Խաչատրյան
2012թ.
1



ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ
ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 2007 - 2008ԹԹ.»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ
ՄԱՍՈՎ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին 2007 - 2008թթ.» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 3-րդ հոդվածի համաձայն՝

«(1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը Վերականգման վարկերի Բանկին ազատում է բոլոր տեսակի հարկերից և պետական այլ տուրքերից, որոնք 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման ու իրականացման համար սահմանված են Հայաստանում:

(2) 1-ին հոդվածում նշված ծրագրերի շրջանակում վճարվելիք հարկերը, առաքումների և ծառայությունների համար վճարվելիք այլ տուրքերը ֆինանսավորում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, սակայն ոչ 1-ին հոդվածում նշված վարկի և ֆինանսական օժանդակության միջոցներով: Այս նպատակով ՀՀ կառավարությունը համապատասխան միջոցներ տրամադրում է սեփական բյուջեից:»:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից Համաձայնագրով նախատեսված ծրագրի իրականացման նպատակով ներմուծված ապրանքների մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացվող չգրանցված անձանց փոխարեն առաջացող՝ ԱԱՀ-ի պարտավորության գումարները Համաձայնագրին համապատասխան փոխհատուցվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N1007-Ն որոշմամբ հաստատված՝

հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 6-րդ կետով՝ **պաշտոնապես պարզաբանում են**.

1. Համաձայնագրով նախատեսված ծրագրի իրականացման նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից ներմուծված ապրանքների մաքսային հայտարարագրերում, ինչպես նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետում նշված գործարքների մասով օրենքով սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով, դեպքերում և չափերով:

2. Համաձայնագրով նախատեսված՝ պետական բյուջեի միջոցների հաշվին փոխհատուցված ԱԱՀ-ի գումարները ներառվում են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի համախառն եկամտի մեջ՝ որպես անհատույց ստացված ակտիվներ և հարկվում շահութահարկով՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով: